ԲՄԿ ՊՈՒՀ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Մ.Ս. Քալաշյան

«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ(ներ)՝ ի.գ.թ., ավագ դասախոս Հարությունյան Ա.Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քաղաքական եւ իրավական ուսմունքների պատմություն

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն,Քրեական իրավունք և դատավարություն, Գործարարական իրավունք

Դասիչ մասնագիտություն՝042101.00.7 Իրավագիտություն

Դասընթացի անոտացիան

Քաղաքական եւ իրավական ուսմունքների պատմությունը մարդկության ոչ միայն իրավաքաղաքական, այլ նաեւ հոգեւոր մշակույթի կարեւորագույն բաղկացուցիչ է: Այն ներառում է նախորդ սերունդների հսկայական փորձը, ցույց է տալիս ազատության, իրավունքի, օրենքի, քաղաքականության եւ պետության ձեւավորման եւ զարգացման հիմնական ուղղություններն ու օրինաչափությունները: Տվյալ առարկան հնարավորություն է ընձեռում հասկանալ, թե ինչպես է տարբեր գաղափարների եւ մոտեցումների արդյունքում զարգանում պետության ու իրավունքի, ազատության, արդարության ու օրենքի վերաբերյալ ընկալումը: Առարկան ցույց է տալիս մարդկային հասարակարգի ողջ զարգացումը՝ նախնադարյան մարդուց մինչ ժամանակակից մարդ: Հայ իրավաքաղաքական մտքի խորքային ընկալումն առարկայի շրջանակներում իր հերթին հետապնդում է ոչ թե ծանոթագրական նպատակ, այլ հանդիսանում է մեր ժամանակներում կենսական նշանակություն ունեցող բաղադրիչ՝ առողջ հասարակություն եւ պետականություն կերտելու համար: Առարկան ներառում է նաեւ իրավունքի անտրոպոլոգիա առարկային բնորոշ եւ վերջինիցս վերցրած բազում օրինակներ եւ մոտեցումներ՝ իրենց տեսական եւ գործնական հատկանիշներով: Առարկայի շնորհիվ ուսանողները ունակ կլինեն ոչ միայն ձեռք բերել տեսական գիտելիքներ մարդկային պատմության իրավաքաղաքական զարգացումների վերաբերյալ, այլեւ կձեւավորեն գործնական հմտություններ տարբեր ժամանակաշրջանների ու աշխարհաքաղաքական միջավայրերի զարգացումների փոխադարձ կապը տեսնելու եւ դրանք այսօրվա իրականության, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության ու օրենքների հետ համադրելու համար:

Դասընթացի նպատակը և խնդիրները

- հասկանալ պետության զարգացման օրինաչափությունները և հասարակությունների և պետության վրա ազդող տարատեսակ տարրերը հնագույն ժամանակներից մինչև ժամանակակից դարաշրջանները:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Պետության և իրավունքի մասին հայեցակարգային գաղափարների և տեսությունների պատմություն, քաղաքական և իրավական դոկտրինների ձևավորման և զարգացման օրինաչափություններ:

Դասընթացի մուտքային պահանջները

Առկա չեն:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Մարդկության իրավական եւ քաղաքական մտքի զարգացման պատմություն, տարբեր ժամանակաշրջանների եւ հասարակությունների առանձնահատկություններ, նմանություններ ու տարբերություններ, համեմատականներ եւ վերլուծություն:
2. Պատմության մեծագույն մտածողների մտքերը, նրանց ապրած ժամանակաշրջանի եւ իրադարձությունների ազդեցությունը նրանց իրավաքաղաքական մտքի զարգացման վրա:
3. Միջավայրի, ժամանակաշրջանի եւ այլ արտաքին գործոնների ազդեցությունը մարդկության եւ գաղափարների զարգացման վրա:

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. Ձեռք բերված տեսական գիտելիքների եւ կարողությունների գործնական կիրառության հնարավորություն ամենօրյա կյանքում:

2. Առկա իրավաքաղաքական երեւույթները եւ իրադարձությունները ավելի ամբողջական եւ խորքային վերլուծելու կարողություն:

3. Մասնագիտական ուղու վրա տարբեր երեւույթների ավելի համապարփակ ընկալում, եւ դրա, հետեւանքով որոշումների, ավելի կշռադատված կայացում:

4. Ցակնացած իրավաքաղաքական նյութի եւ գաղափարի վերլուծության ընթացքում նախինում տեղի ունեցած նմանատիպ իրավիճակի վերլուծության, համեմատական անցկացնելու եւ անալոգիայի կիրառման կարողություն:

- *ընդհանրական իմացական հմտությունները՝*

1. Իրավաքաղաքական տարբեր մոտեցումների ընկալում եւ համեմատական վերլուծության կարողությունների ձեռքբերում: Բ 2.2 Պետության եւ իրավունքի՝ մասնավորապես դրանց զարգացման առանձնահատկությունների խորքային ընկալում, ինչի արդյունքում ավելի պարզ ընկալելի կլինի իրավաբանությունը՝ որպես կոնցեպտ, գաղափար եւ գիտություն:

2. իրականացնել արդի պետաիրավական իրականության ավելի խորը, բազմակողմանի վերլուծություն՝ օգտագործելով քաղաքական եւ իրավական ուսմունքները, հայեցակարգերը

Դասավանդման եղանակները և մեթոդները

– դասախոսություն,

– գործնական աշխատանքներ՝ ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառմամբ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 5 ակադեմիական կրեդիտ (180 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 34ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. **Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝**	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1.Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**76**
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	ստուգարք

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Հին Հնդկաստան: Բրահմանիզմ, Բուդդիզմ	**4**	**2**	**2**
Թեմա 2. Հին Չինաստան: Մոիզմ, Դաոսիզմ, Կոնֆուցիականություն, Լեգիստներ:	**4**	**2**	**2**

Թեմա 3. Հին Հունաստան: Պյութագորաս, Դեմոկրիտ, Հերակլիտ, Պլատոն, Արիստոտել, Էպիկուր, Պոլիբիոս, Ստոիկներ, Սոֆեստներ	4	2	2
Թեմա 4. Հին Հռոմ: Ցիցերոն, Հռոմեական իրավաբաններ: Հուստինիանոսի օրենսգիրք:	4	2	2
Թեմա 5. Միջնադար: Թովմաս Աքվինացի, Մարսիլիուս Պադուանացի:	8	5	3
Թեմա 6. Վերածնունդ: Մաքիավելի:	10	4	6
Թեմա 7. Իրավաքաղաքական միտքը միջնադարում	4	2	2
Թեմա 8. Իրավաքաղաքական մտքի զարգացումները Վերածննդի դարաշրջանում	4	2	2
Ընդամենը	32	16	16

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1.

Ուսումնասիրվելու են քաղաքական եւ իրավական ուսմունքների պատության առարկան ու մեթոդը, տարատեսակ մոտեծումներով:

Թեմա 2.

Ուսումնասիրվելու են Իրավաքաղաքական մտքի ակունքները, Առասպելական մոտեցումներից հասնելով “Homo Juridicus”-ին:

Թեմա 3. Հին Հնդկաստանի իրավաքաղաքական միտքը

Ուսումնասիրվելու են բրահմանիզմն ու բուդդիզմը տեսական մասով ու համեմատականներով:

Թեմա 4. Հին Չինաստանի իրավաքաղաքական միտքը

Ուսումնասիրվելու են Կոնֆուցիոսի և Մո Ցզիի գաղափարները

Թեմա 5. Հին Հունաստանի իրավաքաղաքական միտքը

Ուսումնասիրվելու են Արիստոտելի և Պլատոնի գաղափարները, մասնավորապես՝ իդեալական հասարակարգն ու Պետությունը:

Թեմա 6. Հին Հռոմի իրավաքաղաքական միտքը
Ուսումնասիրվելու են նախաքրիստոնեական Ցիցերոնի և կաթոլիկ Օգոստինոս Երանելու գաղափարները:

Թեմա 7. Իրավաքաղաքական միտքը միջնադարում
Ուսումնասիրվելու են Թովմա Աքվինացու գաղափարները, մասնավորապես՝ սխոլաստիկան ու գաղափարներն իշխանության մասին:

Թեմա 8. Իրավաքաղաքական մտքի զարգացումները Վերածննդի դարաշրջանում
Ուսումնասիրվելու են Մաքիավելիի գաղափարները պետության և իշխանության մասին:

Թեմա 9. Անգլիական իրավաքաղաքական միտքը
Ուսումնասիրվելու են Ջոն Լոկի գաղափարները, Իշխանությունների տարանջատումն ու Պանծալի հեղափոխությունը

Թեմա 10. Ֆրանսիական իրավաքաղաքական միտքը Լուսավորչականության ժամանակաշրջանում
Ուսումնասիրվելու են Ռուսո ու Մոնթեսքյո պետության և օրենքների մասին գաղափարները և դրանց կիրառման մասին մոտեցումները

Թեմա 11. Գարեգին Նժդեհ
Հայ մտավորականությանը ուղղված բաց նամակները պետք է ուսումնասիրվեն՝ շեշտը դնելով եկեղեցու, քաղաքական կուսակցությունների և մամուլի վրա

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. История политических и правовых учений, Учебник для вузов, Под общей редакцией академика РАН, доктора юридических наук, профессора В. С. Нерсесянца, 4-е издание, переработанное и дополненное, Издательство НОРМА, Москва, 2004
2. Fernanda Pirie, The anthropology of law, Oxford, 2013
3. История политических и правовых учений , Ответственный редактор доктор юридических наук, профессор О. Э. Лейст,, Издательство «Зерцало», 2006
4. Daron Acemoglu & James A. Robinson, Why nations fail, Profile books, 2013
5. А. Ревазян, МАКАРАЦ, Том 1, Армяне и Шумеры
6. Գարեգին Նժդեհ-Բաց Նամակներ Հայ Մտավորականությանը
7. Е. П. Блаватская, Тайная Доктрина, Сочинение в 3 томах
8. Авакян Р. О., ПАМЯТНИКИ АРМЯНСКОГО ПРАВА, ИХ ИСТОКИ И ВЗАИМОДЕЙСТВИЕ С ПРАВОМ ДРУГИХ НАРОДОВ, (Настоящая статья относится к серии “Сокровищница армянской правовой мысли”)
9. Артахшасатра или наука политики, перевод с санскрита, издание подготовил В. И. КАЛЬЯНОВ, издательство Академии наук СССР, Москва • Ленинград, 1959

10. Законы Ману, МАНАВАДХАРМАШАСТРА, Перевод С. Д. Эльмановича, проверенный и исправленный Г. И. Ильиным, Москв, «ЭКСМО-Пресс», 2002
11. Որոգայթ Փառաց, Շահամիր Շահամիրյան
12. Դատաստանագիրք, Մխիթար Գոշ, ՀՐԱՏԱՐԱԿԻՉ- Երեւան, 2001թ.
13. Elif Shafak, The forty rules of love, Penguin, 2010
14. Դասընթացի ընթացքում քննարկած մտածողների եւ փիլիսոփաների ցանկացած աշխատություն
15. Թեմաներին առնչվող ցանկացած այլ գրականություն ուսումնասիրելը ողջունվում է